*Հավելված N 3*
*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*
*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

**Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությունը** ստորև ներկայացնում է իր կարիքների համար **Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգման կապալային աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 22/1** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2022** թվականի **օգոստոսի 11**-ին կնքված N **ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 22/1** պայմանագրում **2023** թվականի **մայիսի 5**-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

*Փոփոխության առաջացման պատճառ N 1*՝ Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության և «Երևանյան բազալտ» ՍՊԸ-ի միջև 11.08.2022 թ. կնքված № ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 22/1 ծածկագրով գնման պայմանագրի կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

*Փոփոխության նկարագրություն*՝ Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության և «Երևանյան բազալտ» ՍՊԸ-ի միջև 11.08.2022 թ. կնքված № ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 22/1 ծածկագրով գնման պայմանագրի վճարման ժամանակացույցում կատարվում են փոփոխություններ:

*Փոփոխության հիմնավորում*՝ Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության և «Երևանյան բազալտ» ՍՊԸ-ի միջև 11.08.2022 թ. կնքված № ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 22/1 ծածկագրով գնման պայմանագրի 5.1, 8.5 և 8.8 կետեր:

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

«11» օգոստոսի 2022 թ. կնքված N «**ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 22/1**» ծածկագրով պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Էջմիածին

«05» մայիսի 2023 թ.

Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությունը, ի դեմս տնօրեն Մ. Աբրահամյանի, որը գործում է տնօրինության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երևանյան բազալտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խ. Բաղդասարյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով «11» օգոստոսի 2022 թ. կնքված № «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 22/1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1 և 8.5 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 «11» օգոստոսի 2022 թ. կնքված № «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 22/1» ծածկագրով պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված **Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգման կապալային աշխատանքների** (այսուհետ՝ Աշխատանքներ) վճարման ժամանակացույցում կատարվում են փոփոխություններ՝ սույն Համաձայնագրի N 1 Հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

1.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

1.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 1) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է 2 էջից, 3 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, Պատվիրատուին տրվում է երկու օրինակ, Կապալառուին՝ մեկ: Սույն Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինություն | «Երևանյան բազալտ» ՍՊԸ |
| Արմավիր, ք. Էջմիածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոց 0 | ք. Երևան, Հաղթանակ թաղ., Սպանդարյանի արդյունաբերական հանգույց |
| Վաղարշապատի ՏԳԲ | «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900322001018 | Հ/Հ 220410124071000 |
| ՀՎՀՀ 04711468 | ՀՎՀՀ 01202433 |
| Տնօրեն՝ ____________ Մ. Աբրահամյան | Տնօրեն՝ ____________ Խ. Բաղդասարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«11» օգոստոսի 2022 թ. կնքված*
*«ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 22/1» ծածկագրով պայմանագրում*
*փոփոխություններ կատարելու նպատակով*
*«05» մայիսի 2023 թ. կնքված համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել | | | | | | | |
| | | | Ընդամենը 2022 թ. | 2023 թ-ին, այդ թվում | | | | | | 2024 թ-ին, այդ թվում |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | Ընդամենը 2023 թ-ին | 1-ին կիսամյակ |
| 1 | 45231187 | Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգման կապալային աշխատանքներ | 0 | 150000000 | 200903175 | 260903175 | 299210762 | 336966369 | 336966369 | 491537938 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*Աշխատանքի դիմաց վճարումներն իրականացվում են համապատասխան կատարողական ակտերի, հանձնման – ընդունման արձանագրությունների հիման վրա:*
*Վճարման ժամանակացույցում հնարավոր են փոփոխություններ՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրերի հիման վրա:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Էջմիածնի համայնքապետարանի
«Բարեկարգում» տնօրինություն
Արմավիր, ք. Էջմիածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոց 0
Վաղարշապատի ՏԳԲ
Հ/Հ 900322001018
ՀՎՀՀ՝ 04711468
Տնօրեն՝ ____________ Մ. Աբրահամյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Երևանյան բազալտ» ՍՊԸ
ք. Երևան, Հաղթանակ թաղ., Սպանդարյանի
արդյունաբերական հանգույց
«Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220410124071000
ՀՎՀՀ՝ 01202433
Տնօրեն՝ ____________ Խ. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ